ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվարի 2022 թվական, N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 23-ի երկրորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի փետրվարի 23-ի N 4-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվարի 2022 թվական, N 5-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀԼոռումարզիՕձունհամայնքիավագանու
«23» փետրվարի 2022 թվականի N 5-Նորոշման

1. ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Օձուն համայնքի բյուջեն 2021 թվականին փաստացի կազմել է 422 միլիոն 179 հազար 832դրամ , ընդ որում սեփական եկամուտները կազմել են 64 միլիոն 734 հազար 255 դրամ, որից հարկերը և տուրքերը կազմել են *48 միլիոն 251 հազար 290* ՀՀդրամ, տարեվերջի ազատ մնացորդը կազմել է 66 346 788դրամ

1. Սեփական եկամուտների մեջ հողի հարկի տարեկան հաշվարկի պլանային չափը կազմել է ***30*** միլիոն 205 հազար100 դրամ, փաստացի կատարվել է ***22*** մլն 934 հազար 458, այսինքն՝ 75,93 տոկոս:
2. Փոխադրամիջոցների համար գույքահարկ նախատեսվել է 29 միլիոն **87 հազար** դրամ, փաստացի կատարվել՝ 24 միլիոն 25 հազար **832**, կատարողականը՝ 82,6 տոկոս:
3. Հողի վարձակալության վճարները նախատեսվել են 7միլիոն 500 հազար դրամ, փաստացի կատարվել է ***6*** միլիոն 533 հազար 135 կատարողականը՝ 87,11տոկոս:
4. Այլ գույքի վարձակալությունից մուտքերը նախատեսվել են 4 միլիոն դրամ, փաստացի կատարվել է 5 միլիոն 396 հազար 360 կատարողականը՝ 134,91 տոկոս
5. Աղբահանության վճարների հավաքագրումը նախատեսված 4մլն 500 հազար դրամի փոխարեն կազմել է 1մլն 796 հազար 30 դրամ, այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ցածր է, և կազմում է նախատեսվածի 39,91 տոկոսը, ինչը ենթադրում է, որ մեր աշխատանքները և ձեր պատրաստակամությունը բավարար չեն հավաքագրումները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, թեպետ քիչ չեն բնակչության շրջանում 2018-2021թ-ի ընթացքում կատարված իրազեկման և բացատրական աշխատանքները: Նախատեսվում է ընթացիկ տարում աղբահանության վճարի հավաքագրման ցուցանիշը հասցնել 100 տոկոսի:

6.Պաշտոնական դրամաշնորհները նախատեսվել են 321 միլիոն 520 հազար 421 դրամ, փաստացի ստացվել է 315 միլիոն 674 հազար 780 դրամ և կազմում է նախատեսվածի 98,18 տոկոսը,:

7. Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրված դոտացիան կազմել է 215 միլիոն 781 հազար 100 դրամ, փաստացի ստացվել է 215 միլիոն 721 հազար 100 դրամ և կազմում է նախատեսվածի 99,97տոկոսը,:

8. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ Կառավարության տրամադրած պետական սուբվենցիաները նախատեսվել 105 միլիոն 739 հազար 321դրամ, փաստացի կազմել է 95 միլիոն 627 հազար 300 դրամ կազմում է նախատեսվածի 90,44տոկոսը

Ինչպես տեսնում ենք ունենք սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների անկում, որը ինչ-որ չափով կապված է կորոնավիրուսով պայմանավորված մարդկանց վճարունակության անկման, նաև որոշ դեպքերում բնակիչների անբարեխղճության հետ:

Այսքանը ընդհանրական բյուջեի եկամտային հատվածի մասին, իսկ ծախսային հատվածում ունենք հետևյալ պատկերը:

Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
(01/01/21 - 30/12/21թ. Ժամանակահատվածի համար)

Տողի NN	Եկամտատեսակները	Ընդամենը	Տարեկան ճշտված պլան		Փաստացի			%
			վարչական	ֆոնդային	ընդամենը	վարչական	այդթվում ֆոնդային բյուջե	
	2	3	4	5	6	7	8	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝	397 852 521	292 113 200,00	119 818 721	380 409 035	281 278 255	113 210 180	95,61
	1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ այդ թվում՝	60 332 100	60 332 100	0	48 251 290	48 251 290,00	0	79,98
	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում՝	30 205 100	30 205 100		22 934 458	22 934 458	0	75,92
	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	718 100.00	718 100.00		47 235	47 235	0	
	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	29 487 000,00	29 487 000,00		22 897 220.00	22 897 220.00	0	77,65
	1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝	29 087 000,00	29 087 000,00		24 025 832,00	24 025 832,00	0	82,60
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	29 087 000,00	29 087 000,00		24 025 832,00	24 025 832,00	0	
	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝							
	Տեղական տուրքեր այդ թվում՝	1 040 000	1 040,00		1 291 000	1 291 000	0	124,13
	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար	50 000	50 000		295 000	295 000	0	
	բ)Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	790 000	790 000		796 000	796 000	0	100,75

	գ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար	200 000	200 000		200 000	200 000		100,00
	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ այդ թվում՝	321 520 420	215 781 100	105 739 321	315 674 780	216 544 000	99 130 780	98,18
	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլմակարդակներից որից՝	215 781 100	215 781 100		216 544 000	216 544 000		100,35
	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	215 781 100	215 781 100		215 721 100	215 721 100		99,97
	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ այդ թվում՝							
	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	105 739 320	0	105 739 320	95 627 300	0	95 627 300	90,44
	2.6 Կապիտալ ներքին.պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից այդ թվում՝	105 739 320	0	105 739 320	95 627 300	0	95 627 300	
	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝	16 000 000	16 000 000	14 079 400	16 482 965	16 482 965	14 079 400	103,01
	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ այդ թվում՝	11 500 000	11 500 000		11 929 498	11 929 498	0	103,73
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	7 500 000	7 500 000		6 533 135	6 533 135		87,11
	Այլ գույքի վարձակալություն	4 000 000	4 000 000		5 396 363	5 396 363		134,91
	3.5 Վարչական գանձումներ այդ թվում՝	4 500 000	4 500 000		4 077 380	4 077 380		90,61
	Տեղական վճարներ,որից	4 500 000	4 500 000		2 065 530	2 065 530		45,90
	աղբահանություն	4 500 000	4 500 000		1 796 039	1 796 039		39,91
	Այլ տեղական վճարներ				269 500	269 500		
	Ինքնակամի օրինականացման վճարներ				2 011 850	2 011 850		
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր			14 079 400	14 079 400		14 079 400	
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրված այլ եկամուտներ				476 067	476 067		

Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (01/01/21 - 30/12/21թ. ժամանակահատվածի համար)

	Տարեկան ճշտված պլան			Փաստացի			
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		%
	(ս.10+ ս11)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(ս.13+ ս14)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	
2	9	10	11	12	13	14	
ԸՆԴԱՄԵՆԸԾԱԽՍԵՐ	464,199,309	292,113,200	186,165,509	422,179,832	257,531,516	178,727,716	90,95
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	111,782,419	95,649,280	16,133,139	106,712,383	91,760,699	14,951,684	95,46
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	98,749,960	93,949,280	4,800,680	94,525,399	90,228,899	4,296,500	95,72
Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	98,749,960	93,949,280	4,800,680	94,525,399	90,228,899	4,296,500	95,72
Ընդհանուր բնույթի ծառայություններ	600	600	0	487	487	0	81,16
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	12,432,459	1,100,000	11,332,459	11,699,184	1,044,000	10,655,184	73,33
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/այլ դասերի չպատկանող/	12,432,459	1,100,000	11,332,459	11,699,184	1,044,000	10,655,184	73,33
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	63,143,256	7,032,720	56,110,536	59,639,995	7,014,420	52,625,575	94,45
ճանապարհային տրանսպորտ	82,963,856	5,232,720	77,731,136	81,852,106	5,232,720	76,619,386	98,66
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-21,120,600	500	-21,620,600	-23,512,111	481,7	-23,993,811	111,32
Աղբահանում	10,000,000	10,000,000	0	9,981,023	9,981,023	0	99,81

Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)z	22,443,100	0	22,443,100	20,319,723	0	20,319,723	90,54
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	53. 268 .800	33 .900.000	19. 368. 800	52. 863. 659	33 494 859	19 368 800	99.24
Փողոցային լուսավորություն	53. 268 .800	33 .900.000	19. 368. 800	52. 863. 659	33 494 859	19 368 800	99.24
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹԵՎԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860)	92 909 934	22 000 000	70 909 934	92 284 256	21 374 322,20	70 909 934	99,32
որից՝							
Գրադարաններ	6 500 000	6 500 000	0	6 500 000	6 500 000	0	100
Թանգարաններ և ցուցասրահներ							
Մշակույթիտներ, ակումբներ, կենտրոններ	92 809 934	21 900 000	70 909 934	92 184 256	21 274 322	70 909 934	99,32
Այլ մշակութային կազմակերպություններ							
Կրոնականևհասարակականայլծառայություններ	100 000	100 000	0	100 000	100 000	0	100
Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ							
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980)	83 170 000	81 970 000	1 200 000	77 418 792	76 866 792	552 000	93,08
որից՝							
Նախադպրոցական կրթություն	46 000 000	45 000 000	1 000 000	42 885 000	42 333 000	552 000	92,28
Միջնակարգ ընդհանուր կրթություն	2 570 000	2 570 000	0	2 562 330	2 562 330	0	99,7
Բարձրագույն մասնագիտական կրթություն	6 000 000	6 000 000	0	4 499 900	4 499 900	0	75
Արտադպրոցական դաստիարակություն	28 200 000	28 000 000	200	27 086 000	27 086 000	0	96,05

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	400 000	400 000	0	385 562	385 562	0	96,39
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3 400 000	3 400 000	0	2 960 000	2 960 000	0	87,06
որից՝							
Ընտանիքի անդամներ և զավակներ	900 000	900 000	0	780 000	780 000	0	86,67
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	2 500 000	2 500 00	0	2 180 000	2 180 000	0	87,2

1. Աշխատակազմի պահպանման ծախսը կազմել է 94 միլիոն 525 հազար 399 ՀՀ դրամ ,

2. Հողի հարկի, գույքահարկի բազաների ևՀԿՏՀ կայքերի, ՀԾ հաշվապահական ծրագրի սպասարկման նպատակով ծախսվել է 573 հազար 800 ՀՀ դրամ:

3. Անասնաբուժների վարձատրության ծախսը կազմել է 1 միլիոն 300 հազար ՀՀ դրամ:

4 Հակակարկտային կայանների սպասարկման և գազիբալոնների իցքավորման նպատակով ծախսվել է 481 հազար 700 ՀՀդրամ:

5. Աղբահանության փաստացի ծախսը կազմել է **9 միլիոն 981 հազար 23 դրամ:**

6. Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառում ծախսը կազմել է **92 միլիոն 284 հազար 256դրամ**, որից

6.1՝ Մարզաառողջարանային կենտրոնի կառուցման նպատակով՝ 68 միլիոն 522 հազար 500 ՀՀ դրամ

6.2 Մշակույթի տների և գրադարանների պահպանման համար 6 միլիոն 500 հազար դրամ,

6.3 Արևային էներգիայի պանելների տեղադրման համար 8 միլիոն ՀՀ դրամ

6.4 Ֆուտբոլի դաշտի համայնքի ներդրում 2 միլիոն ՀՀդրամ

6.5 Լոռու տուրիզմի զարգացման հիմնադրամի ներդրում 500 հազար ՀՀ դրամ

6.6 Մշակույթի տան և գրադարանային համակարգի պահպանման և մշակութային միջոցառումների կազմակերպման համար 13 միլիոն 261 հազար 756 ՀՀ դրամ

7 . Կրթության բնագավառին հատկացվել է **77 միլիոն 418 հազար 791 դրամ , այդ թվում՝**

7.1 մանկապարտեզներին՝ 42 միլիոն 885 հազար դրամ,

7.2 արվեստի դպրոցի պահպանմանը՝ 27 միլիոն 86 հազար դրամ ,

7,3 դպրոցների դասագրքերի վճարի համար ՝ 2 միլիոն 562 հազար 330դրամ

7.4,բարձրագույն կրթությանը օժանդակություն 4 միլիոն 499 հազար 900դրամ

7.5 երեխաների տեղափոխմանը՝ 385 հազար 560 ՀՀ դրամ

8. Սոցիալական պաշտպանությանը տրամադրվել է 2 միլիոն 960 հազար դրամ՝ համայնքի սոցիալապես անապահով խավի,

նորածիններին 780 հազար դրամ:

2.Շինարարություն

Օձուն խոշորացված համայնքի 2018-2022 թթ զարգացման ծրագրում ընտրվել է ռազմավարություն համայնքում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքների ուղղությամբ, ինչն իր հերթին կնպաստի տնտեսության, այդ թվում `տուրիզմի զարգացմանը: Սկսած 2018թ-ից Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համայնքներին հնարավորություն է տալիս համաֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրեր իրականացնել: Օգտվելով այդ հնարավորությունից՝ համայնքը 2018-2021 թվականներին իրականացրել է նաև հետագա տարիների համար նախատեսված աշխատանքներ: 2021 թ-ին Օձուն համայնքը ներկայացրել է 4 սուբվենցիոն ծրագրեր, որոնց նախնական արժեքը շուրջ 200մլն դրամ է եղել: 2018-2021թ-ի ընթացքում կատարվել են 200 միլիոն դրամ արժողությամբ ճանապարհաշինական աշխատանքներ, ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել ևս 130 միլիոն դրամի ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ տուֆով սալարկմամբ և ասֆալտապատմամբ:

Հաշվետու 2021թ-ի ընթացքում մեկնարկել են Օձուն համայնքի Օձուն բնակավայրում մարզաառողջարանային կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնք կշարունակվեն 2022թ-ին , ծրագրի արժեքը գերազանցում է 190 միլիոն դրամը, 1-ին էտապով նախատեսված շուրջ 115 միլիոն դրամի աշխատանքների մեծ մասն իրականացվել է , նախատեսվում է ավարտել ամռանը , իսկ երկրորդ էտապը ՝ մինչև տարեվերջ, այս ծրագիրն աննախադեպ է , իր ծավալով և արժեքային իմաստով, համայնքը վերջապես կունենա մարզական , ֆիզիկական առողջության վերականգնողական կենտրոն: **1-ին հարկում նախատեսվում է բուժկետ, մարզադահլիճ, վերականգնողական կենտրոնի դահլիճ, սակավաշարժ անձանց համար առանձնացված հանդերձարաններ՝ իրենց համապատասխան սանհանգույցներով և ցնցուղարաններով: 2-րդ հարկում նախատեսված է. մարմնամարզարանի դահլիճ,սպասասրահ և առանձնացված հանդերձարաններ իրենց սանհանգույցներով և ցնցուղարաններով: Ծրագրի երկու փուլերն էլ նախատեսվում են իրականացվել պետական սուբվենցիայի համաֆինանսավորման միջոցով: 2021թ-ին նախատեսվել է ծրագրի պետական համաֆինանսավորում 40 տոկոս, 2022 թ-ին ծրագրի հաստատվելու դեպքում, նախատեսվում է 45 տոկոս;**

2021թ-ին , ինչպես և նախորդ տարիներին իրականացվել են ճանապարհների հիմնանորոգման , ինչպես նաև ընթացիկ պահպանման աշխատանքներ; Օձուն բնակավայրում սուբվենցիոն ծրագրով ասֆալտապատվել է 9-րդ փողոցը ՝ 950գծմ երկարությամբ : Գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի արժեքը 44միլիոն 250 հազար դրամ է: Համայնքի համաֆինանսավորման չափը 65 տոկոս է՝ 28 միլիոն 762 հազար 500 դրամ: Այգեհատ բնակավայրում իրականացվել են 15 586 908 դրամի տուֆով սալարկման աշխատանքներ ՝ թիվ 6 փողոցում, սալարկվել է 1700քառ մ տարածք: Համայնքի ֆինանսավորման մասնաբաժինը 40 տոկոս է կազմել:

2021թ-ի ընթացքում ասֆալտապատ փողոցներ ընթացիկ պահպանման նպատակով կատարվել են նաև Օձուն համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ ՝ 5 232 720 դրամ:

Համայնքի Օձուն, Արևածագ, Այգեհատ, Ծաթեր բնակավայրերում իրականացվել են 11 850 000դրամի լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ, տեղադրվել են 81 լեդ 40Վատ հզորությամբ լուսատուներ: Լուսավորության համակարգերի շարունակական ընդլայնման հետ կապված խնդիր ունեինք նաև այլընտրանքային էներգիա ստանալ, Հագվի բնակավայրում տեղադրվել են ընդհանուր 25 ԿՎՏ ժամ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային պանելներ:

2021թ-ին ավարտվել են նաև Եվրոպայի խորհրդի դրամաշնորհային ծրագրով , համայնքի և Կառավարության համաֆինանսավորմամբ, դեռևս 2020թ-ին սկսած այս դահլիճի վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքները: Վերանորոգումը կատարվել է 2020թ-ին , իսկ 2021թ-ին ձեռք են բերվել պրոեկտոր՝ էկրանով, խորհրդակցությունների սեղան , աթոռներ և ամբիոն:

3. Կոմունալ տնտեսություն

2021թ –ի ընթացքում, ինչպես նախորդ տարիներին , կատարվել է կանոնավոր աղբահանություն խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում: Աշխատանքները իրականացվել են <<Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-իկողմից: Չնայած այն հանգամանքին , որ բացի աղբահանությունը, մաքրվել են նաև շատ դժվարամատչելի տարածքներ, փակվել են հին աղբավայրեր, բայց դեռևս հաճախակի ենք հանդիպում

չնախատեսված վայրերում աղբակույտերի առաջացման խնդրին, ինչը հարիր չէ մեր համայնքին: Սա խնդիր է , որն ազդում է մեր համայնքի հեղինակության և գրավչության վրա : :
Սկսած 2018թ.-ի հունվարի 1-ից Կառավարության պահանջով և համայնքի ավագանու որոշմամբ աղբահանությունը իրականացվում է մասնակի փոխհատուցմամբ՝ սահմանվել է վճար ֆիզիկական և իրավաբանականան ածանց համար: Այս մշակույթը ևս զարգացնելու կարիք ունի: Յուրաքանչյուր ֆիզիկական անձի համար նախատեսվում է ամսական 100 դրամ աղբահանության ծառայության վճար, ինչի հավաքագրումը շարունակվում է մնալ ցածր կատարողականով: Համայնքի կոմունալ տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ բազմաֆունկցիոնալ էքսկավատորի և ավտոգրեյդերի ձեռքբերումը: Աշխատանքները , որոնք կապված էին տեխնիկայի վարձակալության հետ կապված մեծ ծախսերի հետ, հիմա հնարավոր դարձավ իրականացնել համայնքի միջոցներով:
Շնորհիվ կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի համայնքը այժմ իր միջոցներով կարողանում է իրականացնել սելավատարների մաքրման, գրունտային ճանապարհների հարթեցման, ջրագծերի նորոգման /փոխարինման/ աշխատանքներ՝ համայնքի բնակավայրերում ըստ անհրաժեշտության: Այս աշխատանքների իրականացման նպատակով համայնքի բյուջեից 2021թ-ին ծախսվել է 3,7 միլիոն դրամ:

4. Գյուղատնտեսություն

2022թ. հունվարի 1-ի դրությամբ Օձուն խոշորացված համայնքում առկա են խոշոր եղջերավոր անասուններ՝ 4933 գլուխ, մանր եղջերավորներ՝ 1648, ձիեր ՝ 190, խոզեր՝ 1458, թռչուններ՝ 8418 թև; Մշակվել են հացահատիկային կուլտուրաներ՝ այդ թվում ցորեն 715 հա, եգիպտացորեն 107 հա, արևածաղիկ 6 հա : Կարտոֆիլի ցանքսը կատարվել է 228 հա-ի վրա, միջին բերքատվությունը մինչև 18 տոննա: Բանջարաբոստանային կուլտուրաներ մշակվել են 660 հա, հատիկաընդեղեն 105 հա, բազմամյաբույսեր 17 հա, կերային մշակաբույսեր ՝92 հա, ազնվամորի 24 հա, ծխախոտ՝ 1 հա:

Պետական աջակցությամբ 2021թ-ին համայնքին տրամադրվել է 400 պարկ ազոտական պարարտանյութ՝ 7000 դրամով և վարսակ:

5. Մշակույթի և սպորտի ոլորտ

Պետք է արձանագրել, որ կորոնավիրուսով կապված սահմանափակումները որոշակի պասսիվացրին մշակութային կյանքը ինչպես ամբողջ երկրում , այնպես էլ մեր համայնքում: Բայց համայնքում շարունակում են գրոծել արվեստի դպրոցը և մշակույթի տունը՝ իրենց բազմաթիվ խմբերով:
Օձունի Մանկական արվեստի դպրոցում սովորում են 136 աշակերտներ, գործում են երաժշտական տարբեր գործիքների՝ դաշնամուրի, ջութակի,ժողգործիքների, ժողովրդական երգի ևն կարչության դասարաններ:
Օձունի Մշակույթի տանը գործում են թատերական, պարի, կարատեի, ձեռագործ աշխատանքների խմբակներ: Գործող խմբակներն ունեն բավարար պայմաններ, ինչի արդյունքում մենք ամեն տարի արձանագրում ենք տարբեր խմբակներ հաճախող երեխաների թվի աճ:

6. Տուրիզմ և արտաքին կապեր

Ամեն տարի համայնքի կողմից աշխատանքներ են տարվում ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ինչը միտված է նաև տուրիզմի և տնտեսության այլ ոլորտներում ներդրումների համար համայնքը գրավիչ դարձնելուն: Համայնքի բնակավայրերի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, պատմամշակութային արժեքների առկայությունը, հյուրանոցի և հյուրատների առկայությունը, ենթակառուցվածքների առկայությունը, ինչու չէ՝ ներկայիս մասսամբ բարեկարգ վիճակը,ստեղծում են բարենպաստ պայմաններ տուրիզմի տարբեր ճյուղերի զարգացման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում

համայնքիմաքրությանն ուղղված միջոցառումներին: Վերջին տարիներին նպատվում է ներքին զբոսաշրջության աճի տենդենց: Համայնքը համագործակցում է այն բոլոր կառույցների հետ, որոնք աշխատանքներ են կատարում տարբեր բնակավայրերումտուրիզմի զագացման հնարավորություններիհո ւսումնասիրման ուղղությամբ:
Համայնքում հաջողությամբ գործում և զարգանում է հյուրատնայինբիզնեսը: Ընդհանրապեսզ բոսաշրջային բիզնեսը համայնքում զարգացնելու համար ունենքբավարար հնարավորություններ՝ աշխարհագրական նպաստավոր դիրք, բնակլիմայական մեղմ պայմաններ, պատմամշակութային հուշարձաններ, ասֆալտապատ, լուսավոր փողոցներ: Պետք է նշեմ , որ համայնքի պատմամշակութային արժեքները աշխարհին վերջին տասնամյակում ավելի ճանաչելի են դարձրել մեր հոգևոր հովիվները:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

Աուդիտորական եզրակացություն

Լոռու մարզի Օձունի համայնքի 2021թվականի բյուջեի

Տարեկան հաշվետվության

Իմ կողմից կատարվել է 2021թվականի բյուջեի կատարման հաշվետվության աուդիտ առ 31դեկտեմբերի 2021թ.

Աուդիտը իրականացվել է աուդիտորական համընդհանուր չափանիշներին համապատասխան:Այդ չափանիշները պահանջում են,որ աուդիտը կատարվի այնպես ,որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, որ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են առանց անճշտությունների:

Ուստի իմ կողմից կատարված աուդիտի արդյունքում իմ կարծիքով բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական դրույթներով ճիշտ է արտացոլում համայնքի ֆինանսական դրությունը առ 31.12.2021թվականի դրությամբ և համապատասխանում է հաշվապահական ընդունված սկզբունք ներին:

20 փետրվարի 2022 թվական

աուդիտոր Ա.Տիտանյան

Լոռու մարզի Օձուն համայնքի 2021թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության աուդիտ

Համայնքի 2021թվականի բյուջեն եկամուտների մասով 368635,7 հազար դրամ,իսկ ծախսային մասով 388 520, 2հազար դրամ հաստատվել է 2020թվականի դեկտեմբերի 30 ավագանու նիստի թիվ 80-ն որոշման:

Օձուն համայնքի 2021թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

հազար դրամ

հոդվածների անվանումները	եկամուտների պլան	ճշտված պլան	փաստացի	շեղում		կատարողական
հարկային եկամուտ	**60332100,00**	**60332100,00**	**48251290,00**	0,00	-12080810,00	79,98
ա)հողի հարկ	30205100,00	30205100,00	22934458,00	0,00	-7270642,00	75,93
բ)գույքահարկ	29087000,00	29087000,00	24025832,00	0,00	-5061168,00	82,60
գ) տուրքեր	1040000,00	1040000,00	1291000,00	0,00	251000,00	124,13
պաշտոնական դրամաշնորհներ	**292303600,00**	**321520421,40**	**315674780,00**	29216821,40	-5845641,40	98,18
ա) արտաքին պաշտոնական դրամաշնորհ		0,00		0,00	0,00	0,00
ա) ֆին համահարթ սկզբունքով տրամադրված դոտացիա	215781100,00	215781100,00	215721100,00	0,00	-60000,00	99,97
բ) սուբվենցիա	76522500,00	105739321,40	95627300,00	29216821,40	-10112021,40	90,44
3.Այլ եկամուտներ	**16000000,00**	**16000000,00**	**16482965,30**	0,00	482965,30	103,02
ա)սեփ.համարվող հող վարձ վարձավճաներ	7500,00	7500,00	6533,14	0,00	-966,86	87,11
բ)վարձակալությամբ հողերից վարձավճար				0,00	0,00	
գ) այլ գույքի վարձ-ից մուտքեր	4000,00	4000,00	5396,36	0,00	1396,36	134,91
վարչ գանձումներից	4500,00	4500,00	4077,38	0,00	-422,62	90,61
ա) տեղական վճարներ	4500,00	4500,00	1796,03	0,00	-2703,97	39,91
բ)այլ տեղ վճար	0,00	0,00	269,50	0,00	269,50	
գ)ինքնակամի օրինակ	0,00	0,00	2011,85	0,00	2011,85	
վարչ բյուջեի պահ ֆ-ին		14079,40		14079,40	-14079,40	0,00
Ընդամենը	**368635700,00**	**397852521,40**	**380409035,30**			

Օձուն համայնքի 2021թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ
ծախսերի գծով

հազար դրամ

հոդվածների անվանումները	եկամուտների պլան	ճշտված պլան	փաստացի	շեղում		կատարողական
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	100766488,00	111782419,40	106712383,40	11015931,40	-5070036,00	95,46
Տնտեսական հարաբերություններ	23179400,00	63143256,00	59639995,00	39963856,00	-3503261,00	94,45
Շրջակա միջավայրի պաշտպանություն	72443100,00	32443100,00	30300746,60	-40000000,00	-2142353,40	93,40
Բնակարանային շին և կոմունալ ծառայություններ	36500000,00	53268800,00	52863659,20	16768800,00	-405140,80	99,24
Առողջապահություն						
Հանգիս,մշակույթ,կրոն	20500000,00	92909934,00	92284256,20	72409934,00		99,33
Կրթություն	83300000,00	83170000,00	77418791,90	-130000,00	-5751208,10	93,08
Սոցիալական պաշտպանություն	4900000,00	3400000,00	2960000,00	-1500000,00	-440000,00	87,06
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	46931200,00	24081800,00			-24081800,00	0,00
Ընդհամենը	388520188,00	464199309,40	422179832,30	75679121,40	-42019477,10	90,95

Ծախսերը եկամուտների նկատմամբ կազմել են 110,98

Բյուջետային միջոցների ազատ մնացորդը 31,12,2021թվականին կազմել է 66 346 790դրամ

այդ թվում 7 304 010 դրամ վարչական մասով և ֆոնդային մասով 59 042 780 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվարի 2022 թվական, N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2018-2022 թվականների հնգամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2021 թվականին իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

Հավելված Օձուն համայնքի ավագանու

2022 թվականի փետրվարի 23-ի

N 6-Ա որոշման

2018-2022թթ հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2021թ-ի ընթացքում իրականացված աշխատանքներ

2018-2021թթ-երի ընթացքում իրականացվել են բազմաթիվ կապիտալ բնույթի աշխատանքներ, որոնք նախատեսված են եղել համայնքի զարգացման հնգամյա ծրագրով և համահունչ են եղել ընդհանրապես համայնքի զարգացման տեսլականին: Իրականացված աշխատանքները քանակական և որակական առումով մի քանի անգամ գերազանցել են մեր համեստ կանխատեսումները: Սկսած 2018թ-ից , երբ Կառավարությունը համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներով համաֆինանսավորումներ իրականացրեց, հնարավոր եղավ նախատեսվածից կրկնակի ավելի ծրագրեր իրականացնել: Մասնավորապես.

ծրագիրը	Կատարողը	Ա կնկալվող Արդյունքը	հնգամյա ծրագրով նախատեսված ժամկետը	հնգամյա ծրագրով նախատեսված Ֆինանսական ապահովումը	Կատարողական

Համայնքի բոլոր բնակավայրերում սելավատարների մաքրում	Համայնքա-պետարան	Համայնքի բնակավայրերի պաշտ-պանում աղետների ռիսկերից/հեղեղումներ, թունավորումներ և այլն/	2018-2022թթ	5մլն դրամ	2018-2021 թթ կատարվել է համայնքի բոլոր բնակավայրերում, մասնավորապես՝ 2021թ. Հագվի, Օձուն, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, բնակավայրեր
Արևածագ բնակա-վայրում հանդիսու-թյունների սրահի կառուցում	մասնավոր հատված	Արևածագ բնակա-վայրում հանդիսու-թյունների սրահի կառուցում	2021թ	30մլն դրամ	չի կատարվել մասնավոր հատվածի կողմից
Արդվի բնակա-վայրի համայն-քային կենտրոնի տանիքի նորոգում	Համայնքապե տարան		2021թ	5մլն դրամ	Կատարվել է 2018թ-ին, 2 388 000 ՀՀ դրամով
Օձունի թիվ 4,13,31 փողոց ների ասֆալտապատում	ՀՀ Կառավարություն-համայնքապետարա ն	թիվ 4,13,31 փողոցնե-րի ասֆալտապատում	2021-2022թթ,	60մլն	4-րդ փողոց-2018թ 3110քառ,մ -630գծմ 21 600 000 ՀՀ դրամ 13-րդ փողոց,Այգեհատ բնակավայրի 11-րդ փողոց-2020թ 5000 **քառ.մ** **1000 գծմ -52572064** 31-րդ փող. 2020թ շուրջ 150գծմ /կատարվել

					Է Թումանյանի ՃՇՇՁ ԲԲԸ-ի միջոցներով
Արդվի բնակավայ-ում պտուղ-հա-տապտուղների ընդունման և վերամշակման արտադրամասի հիմնում	Մասնավոր հատված	տեղական հումքով արտադրության կազմակերպում, աշխա տատեղերի ստեղծում	2021-2022թթ	12 մլն	չի կատարվել մասնավոր հատվածի կողմից

2021թ-ին իրականացված ֆոնդային աշխատանքներ

1. «Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման» աշխատանքներ- 11 850 000 դրամ
2. « Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի փողոցների նորոգում սալարկմամբ» աշխատանքներ- 15 586 908 դրամ
3. «Օձուն համայնքի Օձուն բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատմամբ»- 44 250 000 դրամ
4. «Օձուն համայնքի Օձուն բնակավայրում մարզաառողջարանային կենտրոնի կառուցման» աշխատանքներ -114 433 800 դրամ /աշխատանքները կավարտվեն 2022թ-ին/
5 «Օձուն համայնքի Հագվի բնակավայրում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքներ»- 8 190 000 դրամ
6. «Օձուն համայնքի փողոցների փոսային նորոգման » աշխատանքներ - 5 232 720 դրամ

2.Շինարարություն

Օձուն խոշորացված համայնքի 2018-2022 թթ զարգացման ծրագրում ընտրվել է ռազմավարություն համայնքում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքների ուղղությամբ, ինչն իր հերթին կնպաստի տնտեսության, այդ թվում՝ տուրիզմի զարգացմանը: Սկսած 2018թ-ից Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համայնքներին հնարավորություն է տալիս համաֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրեր իրականացնել: Օգտվելով այդ հնարավորությունից՝ համայնքը 2018-2021 թվականներին իրականացրել է նաև հետագա տարիների համար նախատեսված աշխատանքներ: 2021 թ-ին Օձուն համայնքը ներկայացրել է 4 սուբվենցիոն ծրագրեր, որոնց նախնական արժեքը շուրջ 200մլն դրամ է եղել: 2018-2021թ-ի ընթացքում կատարվել են 200 միլիոն դրամ արժողությամբ ճանապարհաշինական աշխատանքներ, ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել ևս 130 միլիոն դրամի ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ տուֆով սալարկմամբ և ասֆալտապատմամբ:

Հաշվետու 2021թ-ի ընթացքում մեկնարկել են Օձուն համայնքի Օձուն բնակավայրում մարզաառողջարանային կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնք կշարունակվեն 2022թ-ին , ծրագրի արժեքը գերազանցում է 190 միլիոն դրամը, 1-ին էտապով նախատեսված շուրջ 115 միլիոն դրամի աշխատանքների մեծ մասն իրականացվել է , նախատեսվում է ավարտել ամռանը , իսկ երկրորդ էտապը ՝ մինչև տարեվերջ, այս ծրագիրն աննախադեպ է , իր ծավալով և արժեքային իմաստով, համայնքը վերջապես կունենա մարզական , ֆիզիկական առողջության վերականգնողական կենտրոն: **1-ին հարկում նախատեսվում է բուժկետ, մարզադահլիճ, վերականգնողական կենտրոնի դահլիճ, սակավաշարժ անձանց համար առանձնացված հանդերձարաններ՝ իրենց համապատասխան սանհանգույցներով և ցնցուղարաններով: 2-րդ հարկում նախատեսված է. մարմնամարզարանի դահլիճ,սպասասրահ, և առանձնացված հանդերձարաններ իրենց սանհանգույցներով և ցնցուղարաններով: Ծրագրի երկու փուլերն էլ նախատեսվում են իրականացվել պետական սուբվենցիայի համաֆինանսավորման միջոցով: 2021թ-ին նախատեսվել է ծրագրի պետական համաֆինանսավորում 40 տոկոս, 2022 թ-ին ծրագրի հաստատվելու դեպքում, նախատեսվում է 45 տոկոս;**

2021թ-ին , ինչպես և նախորդ տարիներին իրականացվել են ճանապարհների հիմնանորոգման , ինչպես նաև ընթացիկ պահպանման աշխատանքներ; Օձուն բնակավայրում սուբվենցիոն ծրագրով ասֆալտապատվել է 9-րդ փողոցը ՝ 950 գծմ երկարությամբ : Գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի արժեքը 44 միլիոն 250 հազար դրամ է: Համայնքի համաֆինանսավորման չափը 65 տոկոս է՝ 28 միլիոն 762 հազար 500 դրամ: Այգեհատ բնակավայրում իրականացվել են 15 586 908 դրամի տուֆով սալարկման աշխատանքներ՝ թիվ 6 փողոցում, սալարկվել է 1700քառ մ տարածք: Համայնքի ֆինանսավորման մասնաբաժինը 40 տոկոս է կազմել:

2021թ-ի ընթացքում ասֆալտապատ փողոցներ ընթացիկ պահպանման նպատակով կատարվել են նաև Օձուն համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ ՝ 5 232 720 դրամ:

Համայնքի Օձուն, Արևածագ, Այգեհատ, Ծաթեր բնակավայրերում իրականացվել են 11 850 000դրամի լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ, տեղադրվել են 81 լեդ 40Վատ հզորությամբ լուսատուներ: Լուսավորության համակարգերի շարունակական ընդլայնման հետ կապված խնդիր ունեինք նաև այլընտրանքային էներգիա ստանալ, Հագվի բնակավայրում տեղադրվել են ընդհանուր 25 ԿՎՏ ժամ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային պանելներ:

2021թ-ին ավարտվել են նաև Եվրոպայի խորհրդի դրամաշնորհային ծրագրով , համայնքի և Կառավարության համաֆինանսավորմամբ, դեռևս 2020թ-ին սկսած այս դահլիճի վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքները: Վերանորոգումը կատարվել է 2020թ-ին , իսկ 2021թ-ին ձեռք են բերվել պրոեկտոր՝ էկրանով, խորհրդակցությունների սեղան, աթոռներ և ամբիոն:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ